ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ШИРАКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ М. НАЛБАНДЯНА
M. NALBANDYAN STATE UNIVERSITY OF SHIRAK
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ SCIENTIFIC PROCEEDINGS

Պրակ Բ
Выпуск Б
Issue B

2019 № 2

ՀՏԴ 303.01 ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Դավթյան Ս. Ռ.

Աշխատանքում ներկայացվում են տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների ընտանիքում իրականացվող տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորման տեսական և գործնական կիրառման անհրաժեշտությունը, հիմնական մոտեցումները:

Բանալի բառեր. չտեսնող, թույլ տեսնող, դաստիարակություն, ուսուցում, տարածական կողմնորոշում:

Գիտամեթոդական գրականության վերլուծությունը և արդի պրակտիկան վկայում են այն, որ զարգացման հապաղումով երեխաների, այդ թվում՝ տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների կրթադաստիարակչական գործընթացի խնդիրների լուծման հարցում կարևոր դեր է խաղում ընտանիքը: Հատկապես չտեսնող և թույլ տեսողությամբ երեխաների տարածական կողմնորոշման ձևավորման և զարգացման գործընթացում (Վ. Ա. Ֆեոկտիստովա՝ 1993, Վ. Վ. Տկալովա՝ 1998, Ե. Մաստյուկովա, Ա. Տ. Մոսկովկինա՝ 2004, Ռ. Ն. Ազարյան՝ 2008 և այլք):

Վերջին տարիների թե՛ մանկավարժների, թե՛ հոգեբանների, թե՛ սոցիոլոգների բազմաթիվ ուսումնասիրությունները նպաստեցին զարգացման հապաղումով երեխաների, այդ թվում՝ տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների հետ ընտանեկան պայմաններում իրականացված կրթադաստիարակչական խնդիրների արդյունավետ լուծմանը:

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացում ծնողների կողմից իրականացվող մասնագիտացված օգնությունը, այդ թվում՝ տարածական կողմնորոշման կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման հարցում, ամբողջանում է անցկացվող համակարգված շտկողական զարգացնող միջոցառումներով:

Սակայն համապատասխան գրականության ոչ լիարժեք մշակվածությունը և այն հանգամանքը, որ իրենց երեխաներին օգնելու և օժանդակելու հարցում ծնողները ինքնուրույն չեն տիրապետում բոլոր անհրաժեշտ միջոցներին և հմտություններին, ինչպես նաև իրազեկվածության պակասը նվազեցնում են ընտանեկան պայմաններում չտեսնողների և թույլ տեսողություն ունեցող երեխաների տարածական կողմնորոշման կարողությունների և հմտությունների ձևավորմանը միտված աշխատանքների արդյունավետությունը:

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հետ ընտանեկան պայմաններում իրականացվող աշխատանքների արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է ծնողներին զինել այնպիսի տեսական գիտելիքներով և գործնական առաջադրանքներով, որոնց շնորհիվ ընտանիքում կստեղծվեն բարենպաստ պայմաններ նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորման և զարգացման համար:

Առաջին հերթին այս աշխատանքները կազմակերպելիս կամ անցկացնելիս անհրաժեշտ է տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների մեջ մշակել տարածությունից չվախենալու կարողություն: Կարևոր է նաև ուշադրություն դարձնել լսողության տեղաշարժման ժամանակ ճանապարհի կողմնորոշիչները և առարկաները հիշելու և դրանց վրա կենտրոնանալու կարողությունների ձևավորման և զարգացման վրա: Այս գործընթացում կարևոր է ծնողների ձգտումը և մասնակցությունն իրենց երեխաների՝ տարածության մեջ կողմնորոշվելու կարողության ձևավորման գործընթացին, անշուշտ, հիմնվելով բանավոր հրահանգների, հիշողության, շարժողական զգացողությունների վրա, հասկանալով «աջ», «ձախ», «առջևից», «հետևից» բառերի իմաստը և այլն:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը միտված միջոցների, մեթոդների և մանկավարժական մոտեցումների մշակումն անհրաժեշտ

է՝ ծնողներին օգնելու, որպեսզի մեթոդապես ճիշտ աշխատեն իրենց երեխաների հետ:

Ընտանեկան պայմաններում տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հետ իրականացվող այս աշխատանքի հիմքը ծնողներին տեսական գիտելիքներով ու անհրաժեշտ գործնական հմտություններով զինելն է:

Ընդ որում՝ այդ աշխատանքի գլխավոր ուղղություններն են՝ ծնողների համար նախատեսված մանկավարժական մոտեցումների մշակում, որը կօգնի նրանց ճիշտ կազմակերպելու տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշումն ընտանիքում:

Մշակել արդյունավետ միջոցներ, մեթոդներ և դրանց կիրառման պայմաններ, որոնք կօգնեն տեսողության խանգարումներ ունեցող երեխաներին՝ ընտանեկան պայմաններում կողմնորոշվելու միկրո և մակրո տարածության մեջ:

Այս հիմնախնդիրների լուծումները մշակելիս մենք հաշվի ենք առել մի շարք խնդիրներ: Ընտանիքում տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների և հմտությունների ձևավորման և զարգացման աշխատանքում հիմնական խնդիրներն են՝

1. կանխարգելել այն վնասակար սովորությունների ձևավորումը, որոնք տեսողական պաթոլոգիայի հետևանք են և բացասաբար են անդրադառնում երեխաների տարածական կողմնորոշման կարողության ձևավորման և զարգացման վրա: Օրինակ՝ գլուխը չափազանց հետ թեքելը, առաջ կամ կողքի տանելը, թեքված՝ ոչ ուղիղ քայլելը, քայլքի ժամանակ ձեռքերը ձգելը, ոտքերով աղմկոտ ձայներ արձակելը և այլն,
2. ձևավորել և զարգացնել գլխի, իրանի, պարանոցի, ոտքերի դիրքի, ձեռքերի ճիշտ շարժումները ամպլիտուդայի ճիշտ պահպանումը, որոնք կարևոր դեր ունեն տարածության մեջ կողմնորոշվելու համար,
3. ճիշտ կողմնորոշվել «աջ», «ձախ», «առաջ», «ետ» և նման այլ առաջադրանքների կատարման ժամանակ,
4. ձևավորել միկրո և մակրո տարածության մեջ բանավոր ցուցումներով, հիշողությամբ, ուշադրությամբ, ներբանային

շոշափելիքով, ձայնային կողմնորոշիչներով կողմնորոշվելու կարողություններ,

5. ձևավորել տեղաշարժման ընթացքում տարբեր պայմաններում (ուղիղ գծով, դեպի վերելք, իջնել և բարձրանալ աստիճաններով և այլն) կողմնորոշվելու կարողություններ:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է կիրառել համակարգված հոգեբանամանկավարժական մոտեցումներ, այսինքն՝ տարածական կողմնորոշման խնդիրը պետք է լուծվի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների խոսքային, ձայնային ընկալման, հիշողության, ներբանային շոշափելիքի ձևավորման և զարգացման հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից՝ ակնհայտ է դառնում, որ ընտանեկան պայմաններում տեսողության խանգարումներ ունեցող նախա-դպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը միտված աշխատանքների արդյունավետ իրականացման համար ծնողները պիտի ունենան համապատասխան գիտելիքներ և գործնական կարողություններ ու հմտություններ:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ ընտանիքում տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորմանը միտված աշխատանք-ները միշտ չէ, որ արդյունավետ են ընթանում, իսկ հաճախ էլ չեն իրականացվում ընդհանրապես: Այս գործընթացի դժվարությունները հիմնականում պայմանավորված են ոչ միայն նշված երեխաների տեսողության խանգարումների տեսակով, հոգեբանաֆիզիկական և տարիքային զարգացման առանձնահատկություններով, այլև ծնողների՝ այդ հարցերի մասին տեղեկացվածության նվազ մակարդակով ու նրանց՝ ընտանեկան պայմաններում այդ աշխատանքի կազմակերպման և անցկացման գործնական հմտությունների պակասով:

Այս խնդիրների լուծմանն ուղղված հատուկ գիտամեթոդական գրականության վերլուծությունը վկայում է նաև այս հարցի ոչ լիարժեք տեսական և գործնական վերամշակման մասին:

Հաճախ բացակայում են տեսական մոտեցումները, փորձարարությամբ վերամշակված և հիմնավորված միջոցները տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման ձևավորումն ու զարգացումը կազմակերպելու համար, ծնողներին օգնող մեթոդներն ու գործնական

ուղիները: Իսկ ընտանիքներում նման աշխատանքը, որպես կանոն, իրականացվում է ծնողների սեփական փորձի և գիտելիքների հիման վրա:

Ներկայացնում ենք տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների՝ ընտանեկան պայմաններում ձևավորման և զարգացման կազմակերպման նպատակով ծնողների համար նախատեսված աշխատանքների օրինակելի համալիր, որն իր մեջ ներառում է «Տեսական գիտելիքներ», «Գործնական կարողություններ և հմտություններ» հիմնական բաժինները:

1. «Տեսական գիտելիքներ» բաժնում ներառել ենք այնպիսի կարևոր թեմաներ, ինչպիսիք են «Չտեսնող և թույլ տեսողություն ունեցող նախադպրոցականների հոգեբանական, ֆիզիկական և տարիքային զարգացման առանձնահատկությունները», «Վնասակար սովորություններ, որոնք բացասաբար են ազդում տարածական կողմնորոշման կարողությունների և հմտությունների զարգացման վրա», «Տեղաշարժման և ճիշտ կեցվածքի պահպանմանը միտված կանոններ և պահանջներ», «Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների տարածական կողմնորոշման առանձնահատկությունները՝ բանավոր հրահանգներով, հիշողությամբ, ներբանային շոշափելիքով և այլն», ինչպես նաև նշված կարողությունների կիրառումը գործնականում:
2. Կարողանալ հաշվի առնել երեխայի տեսողության խանգարման աստիճանը և բնույթը, զարգացման երկրորդական խանգարումների դրսևորման ձևերը տարածական կողմնորոշման վարժությունների և առաջադրանքների կատարման ժամանակ, բարենպաստ պայմաններ ստեղծել դրանց կազմակերպման և անցկացման համար, շտկել բոլոր վնասակար սովորությունները, որոնք բացասաբար են անդրադառնում տարածական կողմնորոշման կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման վրա (նկար 1) :

Մեծ տեղ ենք հատկացնում բանավոր ցուցումների, հիշողության, ներբանային շոշափելիքի, լսողության ընկալման միջոցով երեխաների՝ միկրո և մակրո տարածության մեջ կողմնորոշվելու կարողության ձևավորմանը միտված հատուկ վարժությունների, առաջադրանքների և խաղերի՝ ծնողների կողմից ընտրության ձևերին և իրականացման մեթոդներին: Մենք կարևորում ենք նաև տեսողության խանգարումներ

ունեցող նախադպրոցականների՝ տարածության մեջ տարբեր պայմաններում կողմնորոշվելու կարողության ձևավորման ուղղությամբ ծնողների գիտելիքները և հմտությունները (ուղիղ գծով, աստիճաններով իջնել և բարձրանալ՝ հենվելով ներբանային շոշափելիքի վրա, կողմնորոշվել տարածության մեջ դիմացից եկող քայլերի հիման վրա, բռնելով բռնատեղից, լսելով մեծահասակի բանավոր հրահանգները, ցուցումները և այլն):

Գծապատկեր 1. Տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների ուսուցման օրինակելի պլան՝ ծնողների համար

Տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների ծնողների համար նախատեսված տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորման և զարգացմանը միտված մեր

ցուցումները նախատեսված է այնպես, որ նրանք կարողանան աստիճանաբար տիրապետել տեսական գիտելիքներին և, այնուհետև, դրանք իրականացնել գործնական կարողություններում:

Այս հացերում ծնողների կարողությունների աստիճանը ստուգելու և ինքնաստուգման համար մենք առանձնացրել ենք տեսական գիտելիքների և գործնական կարողությունների այն համալիրը, որին պետք է տիրապետի ծնողը:

Օրինակ՝ «Տեսական գիտելիքներ» բաժնից ծնողները պետք է իմանան՝

- տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարիքային, հոգեբանական, ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները.
- վնասակար սովորությունները (գլուխը չափազանց հետ կամ առաջ ուղղված լինելը, կողքի թեքված քայլքը, ձեռքերը առաջ պարզելը, անհամաչափ քայլվածքը և այլն), որոնք բացասաբար են անդրադառնում տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողության ձևավորման և զարգացման վրա.
- ստեղծել բարենպաստ պայմաններ չտեսող և թույլ տեսողություն ունեցող երեխաների անվտանգ տեղաշարժման համար. տալ հստակ և ամբողջական բանավոր ցուցում, տեղաշարժման ճանապարհից ազատել բոլոր ավելորդ առարկաները, երևույթները, բացատրել և ներկայացնել երեխաներին առարկաների դասավորվածությունը, օգտագործել ձայնային կողմնորոշիչներ և այլն.
- գլխի և իրանի ճիշտ դիրքը, քայլելիս ոտնաթաթի դրվածքը, ձեռքի շարժումների ամպլիտուդայի պահպանումը.
- վարժություններ, առաջադրանքներ և խաղեր, որոնք նախատեսված են տեսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների՝ միկրո տարածության մեջ, մոտակա շրջակայքում, մակրո տարածության մեջ, տարբեր պայմաններում՝ ուղիղ գծով, աստիճաններով, վերելքի, վայրէջքի ժամանակ և այլն տարածական կողմնորոշման զարգացման համար:

Բացի վերը նշված գիտելիքներից, փորձարկման վերջում ծնողները պետք է ձեռք բերեն նաև մի շարք կարևոր գործնական կարողություններ:

Նրանք պետք է կարողանան՝

- հաշվի առնել երեխայի տեսողության խանգարման աստիճանը և բնույթը,
- երեխաների մոտ առկա երկրորդական խանգարումների առանձնահատկությունները,
- տարածական կողմնորոշման կարողության ձևավորման ժամանակ պահպանել պարապմունքների կանոնակարգը և ռեժիմը, գիտենալ որոշակի վարժությունների հակացուցված լինելը և այլն:

Այսպիսով, տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորումը և զարգացումը կազմակերպելու և անցկացնելու համար ներկայացված տեսական մոտեցումները, տեսանկյունները և գործնական ուղիները միտված են կատարելագործելու այդ աշխատանքը ընտանիքում: Տեսողության խանգարում ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորումն ու զարգացումն ընտանիքում միայն այս պայմաններում հնարավոր կլինի հասցնել դրական արդյունքի:

ТЕОРЕТИЧЕСКОЕ И ПРАКТИЧЕСКОЕ ОБОСНОВАНИЕ НЕОБХОДИМОСТИ ФОРМИРОВАНИЯ ПРОСТРАНСТВЕННОЙ ОРИЕНТИРОВКИ ДЕТЕЙ С НАРУШЕНИЕМ ЗРЕНИЯ В УСЛОВИЯХ СЕМЕЙНОГО ВОСПИТАНИЯ

Давтян С. Р.

В статье представлено теоритеческое и практическое обоснование необходимости формирования пространственной ориентировки дошкольников с нарушением зрения в условиях семейного воспитаниея.

Ключевые слова: незрячий, слабовидяший, воспитание, обучение, пространственная ориентировка.

THE JUSTIFICATION OF THE NECESSITY OF DEVELOPMENT OF SPACIAL ORIENTATION OF CHILDREN WITH VISUAL IMPAIRMENTS IN FAMILY EDUCATION CONDITIONS

Davtyan S. R.

In the article the main directions, theoretical-practical ways of development of spatial orientation of preschool children with visual development, and its necessity in family education conditions are presented.

Keywords: blind, children with poor vision, learning, dimensional orientation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազարյան Ռ. Ն. Երեխայի տեսողությունը: Մեթոդական ձեռնարկ ծնողների համար: Երևան: «Ասողիկ»: 2008: 16 էջ:
2. Դավթյան Ս. Ռ. Տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորումն ընտանիքում: Հայաստանի «Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու: Երևան: 2016 - 1/23/: էջ 374-378:
3. Դավթյան Ս. Ռ. Տեսողության խանգարում ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորման և զարգացման միջոցներն ընտանիքում: Ուսումնա-մեթոդական ձեռնարկ: «Նահապետ» հրատարակչություն: Երևան: 2018: 47 էջ:
4. Давтян С. Р. Содержание формирования способностей ориентировки в пространстве у дошкольников с нарушением зрения в условиях семьи// Интернаука научный журнал. 2018. Часть 1. 14(48). С. 56-59.
5. Любимов А. А., Денискина В. З. Ретроспективный анализ терминов, описывающих виды пространства для коррекцинного курс, «Пространственная ориентировка» //Дефектология. 2013. N2. С. 16-22.

Տեղեկություններ հեղինակի մասին
Դավթյան Ս. Ռ. *- մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ*
Հայկական պետական մանկավարժական համալսարան
Էլ.փոստ՝ d-sona@mail.ru

Տրվել է խմբագրություն 22.09.2019